

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՋՐ՝

ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻՆ

(7 ապրիլի 2002 թ.)

«Յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգւոյ Սրբոյ. ամէն»:

Միրելի հավաքացալներ, այսօր եկեղեցական մեր Տոնացոյցով Նոր կիրակին է, նոր, քանզի Քրիստոսի Հրաշափառ Հարությունից՝ Սուրբ Զատիկից հետո առաջին կիրակին է: Միաժամանակ գեղեցիկ զուգադիպությամբ այս օրը հանդիպել է նաև Ս. Աստվածածնի Ավետման տոնին, որը մշտապես կայուն կերպով մեր Եկեղեցում տոնակատարւում է ապրիլի 7-ին: Շատ գեղեցիկ, շատ խորհրդանշական զուգադիպություն է, որ Տիրոջ Հրաշափառ Հարության հաջորդ իսկ կիրակին վերստին մեր եկեղեցական կյանքից ներս նշանավորվելու է Տիրամոր բարեխոսության հայցումով, որով նաև մեր քույրերի, մեր մայրերի և բոլոր կանանց համար աղոթքի բարձրացումով:

«Ուրախ լեր բերկրեալդ»:

Ահա այս խոսքերը հնչեցին Ամենասրբուհի Կույսի ունկերին հրեշտակի կողմից, երբ նա փակավին դեռարի աղջնակ էր և Նախախնամության կամքով կոչվեց լինելու մարդկության Փրկչի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մայրը:

Բազում անձեր, որոնց երջանկության համար, լիարժեք երջանկության համար կարծեք թե ոչինչ չի պակասում, բախտ չի վիճակվել, պարփվել չի վիճակվել լսելու այս խոսքերը, թե ուրախ լեր, Տերը քեզ հետ է: Շատ ունկեր այրվել են այն սպասումով, որ Տիրոջից լսեն այն հավաստումը, թե Աստված իր գորակցությունը, իր հովանավորությունը պարգևում է իրենց: Շատ անձեր նաև լսել են այս խոսքերը, սակայն չեն կարողացել արժևորել, չեն գիտակցել այն ուժը, այն բարյացակամությունը, այն վերաբերմունքը, այն գնահատանքը, որ պարունակում են այդ խոսքերը Աստծու կողմից հանդես իրենց անձերը և ավելի որոշակի՝ հանդես իր անձը: Եվ այդ խոսքերը հնչեցին նաև Մարիամ Աստվածամոր ունկերին, և բնական է, որ փասնվեցամյա, փասնհինգամյա դեռարի մի կույս պետք է շփոթվեր, երբ հրեշտակը հայտնվեց իրեն՝ ասելով, թե՝ դու պիտի հղիանաս և ծնես մի որդի, որ Աստծու Որդի պիտի կոչվի:

Ինչպես նշում է Ավետարանիչը, այս խոսքերից ունեցած առաջին զգացումը խոսվության մասնեց, շփոթմունքի մասնեց Մարիամին, թե՝ ինչպես ես փակավին որևէ այդ չեմ ճանաչել, այդ չեմ տեսել, փղամարդ չեմ տեսել և պիտի հղիանամ և որդի ծնեմ: Այնուհետև երբ Գաբրիել հրեշտակապետը մեկնում է իր խոսքերը՝ ասելով,


թե՛ Սուրբ Հոգին պիտի այցելի քեզ, և նա, ով որ պիտի ծնվի քեզնից, Աստուծու Որդի պիտի կոչվի, Մարիամն այլևս չի ընդդիմանում, բայց միայն խոնարհությամբ ու հնազանդությամբ ասում է. «Անավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկ Ա 38): Ծիշար այն բառերը, որ ընդգրկված են Տերունական աղոթքի մեջ. «Եղիցի կամք քո», թող քո կամքը լինի: Լիարժեք վստահություն, լիարժեք հանձնառություն, լիարժեք հնազանդություն Աստուծու կամքի նկատմամբ:

Միրելի հավաքացյալներ, դարեր շարունակ, շուրջ ահա երկու հազար տարիներ քրիստոնյա ողջ աշխարհը մայրության, կանացիության խորհրդանիշն է գտնում Մարիամ Աստվածամոր կերպարում: Տիրամորը նվիրված գրականության և արվեստի բոլոր ստեղծագործությունները կոչված են արտացոլելու կանացիությունը, նրբությունը, բնթշույթունը, հնազանդությունը և այն ամենը, ինչ որ բնորոշ է կնոջը, այն ամենը, ինչ որ բնորոշ է մորը, այն ամենը, ինչ բնորոշ է քրոջը: Եվ ահա այսօր կոչված ենք վերստին այդ կանացիությանը, մայրությանը մեր խոնարհումը բերելու, մեր հարգանքը մատուցելու, մեր աղոթքը բարձրացնելու առ Աստված, որպեսզի այդ կանացիությունը, մայրության գաղափարը մշտապես ծաղկի մեր հոգիներում, մշտապես գործնա հարգանքը մայրության նկատմամբ:

Տարբեր ժամանակներում մայրության և կանանց հանդեպ տարբեր է եղել վերաբերմունքը, տարբեր է եղել կարծիքը, տարբեր են եղել հասարակության մեջ նրանց զբաղեցրած դերի վերաբերյալ եղած տեսակետները: Ֆրասիացի մեկ կայսր կանանց վերապահել է միայն որդեծնության դերը, որպեսզի իր բանակին զինվորներ մատակարարեն, մեկ ուրիշը կանանց վերապահել է խոհանոցը: Մակայն մեր հայրենական ավանդույթի մեջ կանանց կարևորագույն և գլխավորագույն պարտականությունը սեպվել է օջախի պահպանությունը, կրակի պահպանությունը, տան պահպանությունը, այսինքն՝ կնոջ առաքելությունը դիտվել է որպես ընտանիքի սյան առաքելություն, որ կոչված է, ինչպես որ Ավետարանի մեջ է ասվում՝ ինչպես հավը իր ձագուկներին իր թևերի ներքո է հավաքում, այնպես և կինն իր ընտանիքի անդամներին, մայրը իր ընտանիքի անդամներին, իր զավակներին իր ձեռքի տակ պիտի հավաքի, պահպանի օջախի ամրությունը, ինչպես նաև ամենօրյա խնամք տանի նրանց նկատմամբ:

Շատ հեղափոխական էր, սիրելի հավաքացյալներ, երբ երեկ, ապրիլի 7-ի՝ կանանց տոնի առիթով մի հայ կին հեռուստացույցով ելույթ ունենալիս նշում էր, որ անհրաժեշտ է, որ այն ամենը, ինչ որ վերապահված է այսօր հայրենական մեր կյանքում մեր կանանց, համալրվի նաև մեկ ուրիշ հատկանիշով, կինը դառնա ոչ միայն ընտանիքի մայր, ոչ միայն լինի խոհանոցում, ոչ միայն ծառայություն մատուցի իր զավակներին, այլև լինի եռանդուն քաղաքական գործիչ, ինքը իրեն լիդերի, առաջնորդի, քաղաքական առաջնորդի որակներով կարողանա համալրել և հագեցնել:

Անշուշտ մերժելի ոչինչ չկա այս խոսքերում: Ցանկալի է, որ ամեն մեկ կին լինի իր երկրի ազնիվ քաղաքացին, գործուն մասնակցություն բերի իր հայրենիքի քաղաքական կյանքին: Բայց սա այսօրվա կնոջ դերի բարձրացման, կարծում ենք, ոչ այնքան



ճիշդ դեղատոմսն է: Միաժամանակ հեռուստացույցի մեկ այլ հաճախականությամբ փեսնում ենք, որ դրանք լեցուն են «Ալֆրեդի սենյակ» կոչված խաղով, որպես չորս հայ պարմանուհիներ, աղջիկներ ներգրավված են ինչ-որ անհաճելի, հայ կնոջ կերպարին ոչ ներդաշնակ խաղի մեջ, և կարծում ենք, որ այսօրվա ժամանակներում ավելի ճշմարիտ, առավել ընդունելի, առավել խրախուսելի կլիներ, երբ հայ կնոջը թելադրվեր ոչ թե քաղաքական կյանքում իր ակտիվությունը բարձրացնել, այլև փրկվեր միակ ճշմարիտ և մեր ավանդույթներին հոգեհարազատ դեղատոմսը՝ լինելու ընտանիքի մեջ գործուն, առավել հոգաձու, համեստ ու պարկեշտ:

Անշուշտ այս ամենի իրականացումից հետո Եկեղեցին չի արգելում, այլ, ընդհակառակը, խրախուսում է կանանց ներգրավվածությունը հասարակական կյանքի ամենապարբեր ոլորտների մեջ: Բայց մեր Եկեղեցին, Հայ Եկեղեցին, ավանդաբար խրախուսել է, քաջալերել է, որպեսզի կանայք, նախևառաջ մայրերը, քույրերը կոչված լինեն իրենց հիմնական սուրբ առաքելության իրականացմանը, այն է՝ ընտանիքի մեջ հովանավորի, ընտանիքի անաղարպտության, սրբության երաշխավորի մեծ դերի կատարմանը:

Եվ այս մտածումներն է, որ այսօր ուզում էի փոխանցել ձեզ, սիրելի հավաքագյալներ՝ վստահ լինելով, որ ամեն մեկս քաջ գիտակցում ենք մայրերի, քույրերի, կանանց բարձր դերակատարությունը մեր կյանքից ներս: Քանի՜-քանի անձեր են հերոսացել ի սեր կանանց նկատմամբ ունեցած սիրո, ի սեր իրենց մայրերը փաժաժ սիրո: Եվ վստահ եմ, այսօր այդ սերը ամեն մեկիս հոգու մեջ պիտի գորանա, որի մեջ՝ սերը իր մոր նկատմամբ, որի մեջ՝ սերը իր կնոջ նկատմամբ, որի մեջ՝ սերը իր քրոջ նկատմամբ: Եվ աղոթում եմ առ Աստված, որպեսզի այդ սերը գորանալով նորանոր արդյունքներ բերի, նորանոր արդյունքներ արձանագրի մեր կյանքից ներս, քանզի յուրաքանչյուր ազգ, ինչպես մի մեծ գրող է ասել, յուրաքանչյուր ազգ գորավոր է այն չափով, որ չափով գորավոր են և իրենց ընտանիքի պահպանության մեջ նախանձախնդիր այն կանայք, ովքեր սնուցում են այդ ազգի զավակներին:

Այս մտածումներով և այս զգացումով մաղթում եմ և հայցում Սուրբ Հոգու առաքարաշխ շնորհները ամենքիս, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն: